

ՅԱԿ ԱՂԱԲԱՐ



ԱՂԱԿԱՆ ԱԼՔՕՄ

ՓՈՒՆՑ ԵՐԱՐՈՐ


ՊԱՏԿԵՐԱԶԱՐ

ՊԵՏՄԻՆԻՔՆԵՐ ԵՒ ՈՏԱՆՆՈՐՆԵՐ



891.995
Ա-43






30 MAY 2011

1834m
2891
1834

891-999
4-43



u



ԱՆԿԱԿԱՆ ԱԼՔՕՄ

1002
6580

u



ՊԱՏԿՆԱԳՐԱՐԱՆ

ՊԱՏՄԻԱՆՔՆԵՐ ԵՒ ՈՏԱՆԱՌՐՆԵՐ

Handwritten notes in purple ink on the left side of the page.





Ն Ի Ե Ր

ԱՄՄԱՐԱՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՅԻ

ԻՄ ՔԱՂՅՐ

ԱՇԱԿԵՐՏ-ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ ՆԵՐԻՆ

— Էն օտար երկնքի տակ ապրող սանիկներին, որոնցից ազան ու աղջիկը հայ հողով անւած, միմեանցից ընդունակ ու միմեանցից ճարպիկ էին դպրոցումս: Շատ ապրեն նրանք, մութագներին հասնեն...

Աւ, թէև այսօր, հաղարաւօր վերօտեր, ծով ու ցամաքով հեռու ենք իրարից, բայց նրանք միշտ կը մնան իմ սրտում ու իմ յիշողութեան մէջ անմոռանալի:

Կարօտագին սրտով
ուսուցիչ ՅԱԿ. ԱՂԱԲԱԲ

1908 թիւ, 25 յունիսի.
Թիֆլիս:



Պ Ա Պ Ա Ր

Պապար, պապար, սիրուն ջան,
Չախիզ մատաղ՝ կըշ-կըշան,
Պապար արն, գօրանաս,
Հացն ու կօծը մոռանաս:

Երկու թըխիկ թաթերով՝
Ծածափ արն, համ պապար,
Էս բու թըմփիկ տոտերով՝
Համ թըրվրուն, համ ծածառ:

Պապար, պապար, այ բալա,
Պապար արն, բըլբըլն,
Տւած կաթս քեզ հալալ,
Ջան, իմ անգին գու լալա:



ՉԱԼ ԱՔԼՈՐԸ



Մ ո՛ւղըր ո՛ւղը... դո՛ւ՛, լուսացա՛ւ,
 Վեր կա՛ց, թառից ցած արի,
 Երնէկ քեզ պէս քնուկ հաւ
 Մեր նանն էլի՞ կըճարի:

Եւ հաւերը սուս ու փուս՝
 Թռան մէկ-մէկ բնից դուրս...

—Մ ո՛ւղըր ո՛ւղը... դո՛ւ՛, ճաշ դառա՛ւ,
 Այա՛ն նանի, դուրս արի,
 Դեռ էնքան էլ չես պառաւ,
 Ար ժամ գալիք այարի:

Պառաւ նանը դուրս եկաւ,
 Չալ արթորին կուտ աւաւ:



ԲՈՐԲՈՍՆԱԾ

Հ Ա Ց Ը

I.



առան հօքիըը շատ տնտես կին էր:

Նա թէև ծերացել և վաղուց հարսնե-
 րի տէր էր դարձել, բայց և այնպէս դեռ
 աշխոյժ էր և իր տան կառավարութիւնը
 ձեռքից բաց չէր թողնում: Երկար տարիների ընթացքում
 նա այնքան էր փորձել, որ իզուր տեղը մի ծեղ անգամ
 չէր կորցնի իր ընտանիքից: Նրա համար «կծած կորեկն»
 էլ զին և կարևորութիւն ունէր:

Գիւղում ո՛վ չէր ճանաչում Սառան հօքրին, գեղջկու-
 հիներից ո՛րը նրանից խրատ ու խորհուրդ չէր լսել:
 «Օխտը եազն» անգամ նրա սրտի սիրելին էր և նրա հա-
 րազատ բարեկամը: Ամենքը, մանաւանդ տնատէր կանան-
 ցից ու «շնչներես» հարսներից շատերը, մի որևէ կարիքի
 կամ նեղութեան ժամանակ՝ վաղում, գալիս էին նրա
 «խելքի կտրածն» իմանալու:

Եւ իրաւ, նրա «շէնք ու շնորհքը», «ձեռքի ջուրքը»,
 նրա «կար ու ձեւը», «հուռից ու պտղունցը», նրա «սաղ-
 նուրբազը» և «սարգուկարգն» այնքան շնորհալի, օրինակե-
 լի և խրատական էին լինում, որ ո՛չ միայն տեսնողները,
 այլ և լսողներն անգամ շտապում էին սովորել, որպէսզի
 իրենց «տուն ու տեղի» վրայ գործադրեն և իրենք էլ
 Սառան հօքիըների շարքն ընկնեն:

Լուսահոգին—անխ, նանի ջան—անմոռանալի է մա-
նաւանդ իր մանրատր թոռների համար... Գիտէք, ճնց-
էր սիրում չալաչք Ակոփին, ճլտիկ Սեղրակին, դմբօ Գէ-
փօին, թշիկ Լիզօին ու թմփիկ Անօին: Նրա կարծիքով,
Աստծու արևն ու անձրևն իր թոռների բախտիցն էին
արար-աշխարհին լոյս ու կեանք տալի, երկնքի «կէծկծան»
աստղերից ամենահուր-հրատին տւողներն՝ իր «աչքի լիս»
բալէրին էին պատկանում:

Նա տեղնուտեղը սէր էր, ջան ու ջիգար, լերզ ու
թոր. որքան իր հարազատներին ուզում էր աւելի սիրել,
այնքան ուրիշներն էլ լիանում և կշտանում էին նրա ան-
չափ սիրուց: Ինչքան նա իր թոռներին ցանկանում էր
աւելի խնամել, այնքան ուրիշներն ևս գուրգուրում ու
փայփայում էին նրա սիրալիք փաղաքշանքներից:

Եւ հէնց այդ էր պատճառը, որ ամենքը նրան «հօ-
քիը» (հօրաքոյր) էին կանչում:

II.

Մեր տունը—հեքիմ Գէորգի օջախը—մի «գրգեալ» (մեծ),
ընտանիք էր, հօքիըն ու մօքիըն առողջ, քեռին ու «քիձին»
(հօրնղբայր) միասին: Քոյրն ու ախպէրը տանից անպակաս,
և հարսներն ու փեսաներն անբաժան, իսկ դրանց բոլորի
երեխանց «համբարքին» թիւ ու համար չը կար... մի
խօսքով՝ կատարեալ հարսնքատուն: Այսքանի հետ՝ եկող
գնացող «գօնաղն» (հիւր) էլ անպակաս էր մեր տնից. ինչ
ժամանակ որ գար, մերոնց գլխի վրա տեղ ունէր:

Եւ այսպէս՝ օրը մի էր, հիւրերի թիւն անհամար:
Օրական հինգը գալիս էր՝ տասը գնում, տասը գալիս էր՝
հինգը գնում... և բանի որ այդ տան կառավարիչը Սա-
ռան հօքիըն էր՝ թուրք և բուրգ, հայ ու «նասրանի»,
(անհաւատ)—բոլորն էլ հաւասարապէս հիւրասիրում էին
և հաւասարապէս պատիւ ստանում:

Եկողը՝ գալուց չէր ձանձրանում, Սառան հօքիըն՝

նրանց կերակրելուց: Օրական տասը-տասնուհինգ անգամ
«սուփրա» էր, որ բացում էր՝ թանկագին հիւրերին կըշ-
տացնելու համար: Հէնց ամեն անգամ էլ՝ կտրած հացը,
«թրմաքը» պանիրն ու մնացորդ ուտելիքներն ասպարէզ
չէին հանում. ամօթ էր, օջախի համար՝ կտրութիւն,
ու տան «փուզ»-ի (յաջողութիւն) համար լաւ շէր: Միշտ
նոր սուփրա, նոր կերակուր, ամեն անգամ թաժա հաց,
թաժա ուտելիքներ, — ահա հիւրերի բախտատրու-
թիւնը:

Բայց մենք... էղբան «գալմաղալումը», էղբան խառ-
նրւածքումը մեր երեսին մտիկ տուող չը կար... Սառան հօ-
քիըն անգաղար գրաղւած էր, հարսներն էլ առանց նրան
չէին կարող մեր սրտի ուզածը կատարել:

— Թաժա հաց, թաժա հաց ենք ուզում, — կրկնում
էինք մէկ-մէկու ետեից գայրացած, երբ քաղցած ժառա-
նակ՝ աշխատում էին մեզ հին, «քարթիւ» հաց տալ, կամ
թէ սուփրաներից ետ հաւաքած «կտոր-մատիկ» մնացորդ-
ներից, որոնք տաշտի մէջ երկար մնալուց չորացած և
բորբոսնած (հին, ծաղկած հաց) էին լինում և կամ ծա-
ղիկ ընկած ու ընջոտած...

— Թաժէն կայ ոչ, գօնաղները կերան, հատել է, —
սուսիկ-փուսիկ պատասխանում էին մեր հարսները և
լուում:

— Վայ, գօնաղների պնչներիցը դուրս գայ, — բարկա-
նում էինք մենք և դժկամում:

Այնուհետև թէկուզ լացից մէջներիցս «ճօթ» լինէինք
կամ թէ գլուխներս քարէքար տայինք, մեզ լսող չը կար:
Ստիպւած գնում էինք Սառան հօքիըն մօտ՝ թաժա հաց
խնդրելու:

— Նանը մատաղ ըլի ձեր չալ ու չալտիկ երեսին, բա
գիտէք ո՞չ, որ թաժա հացը գօնաղների համար է, —
քաղցրախօսում էր Սառան հօքիըն:

— Խի, նանի, մենք կարալ չենք ուտել, — վրա էինք
բերում մենք:

— Կարաք, համա թաժա հաց որ ուտէք՝ կարալ չէք
փող գտնի. — պատասխանում էր նա՝ ամենայն



«Մտն էարար խորհուրդ էր տալիս»

ինձ տու, ինձ, — միմեանցից առաջ էինք ընկնում մենք և
ուզում էինք շատ ուտել, որպէսզի փողը գտնենք:

Սառան հօքիւրն առանց ըոպէ անգամ կորցնելու՝
հարսներին պատուիրում էր տաշտի բորբոսնամ հացը բե-

լրջութեամբ և
հաւատով:

— Փող... գար-
մացամ բացա-
կանչում էինք
մենք, — նանի,
ոնց թէ փող:

— Հնա, փող...

Աստու դրամ
օրէնք է. երե-
խէքն որ բոր-
բոսնամ հաց
ուտեն, կալի և
հայաթի միջին
ման գան, ան-
պատճառ փող
կը գտնեն: Բա-
լէք ջան, էդ
պատճառով՝
բորբոսնամ
հացը ձեզ հա-
մար եմ պա-
հել, որ ուտէք,
ուտէք և փող
գտնէք:

— Ջան, ջան,

նանի ջան, բոր-
բոսնամ հացը
Փնտուելիս անդադար կրկնում էինք հօքրի սոփորեցրամ հետևեալ աղօթքը.

ընել: Նրանք իսկոյն կատարում էին իրենց սիրելի սկես-
րոջ խօսքը և վագում, գնում, բերում, տալիս էին Սա-
ռան հօքրին: Նա՝ մինչ պատրաստում էր բաժանելու,
մենք մէկ-մէկու առաջ ընկնելով՝ աշխատում էինք որքան
կարելի է շուտ վերցնել այդ չոր քար դարձած հացը՝ որ
կարծես թէ մի չըտեսնւած թանկագին «Հնդու խուրմա»
լինէր մեզ համար:

III.

Ուտում էինք... Աստու ուտել համարէր: Էլի Տէրը
բարի տար Սառան հօքրին, թէ նա մեզ չէր խղճացել և
ամեն մէկիս մի-մի կտոր իւղալի պանիր չէր տւել՝ մենք
չէինք կարող էն բորբոսնամ հացը բերաններս տանել՝
իր անասելի դառնութեան պատճառով:

Գտնում եմ ասում է. ուտելիս էնքան անախորժ
չէր հացի կոշտ ու կոպիտ չորութիւնը, նրա «քար ու
քորինա» պնդերեսութիւնը, որքան նրա մէջ եղած գորշ
ու կանանչ բորբոսնանքը և սև ու կապոյտ ծաղկահա-
տիկները, որոնք մեր բերանում ծամիլու ժամանակ, գրե-
թէ մաղձի դառնութեան էին հաւասար և ճաշակողի սիր-
տը տալիս ու վրա էին անում:

Բայց մենք ուտում էինք: Ուտում էինք, որովհետև
պանիր կար մեր ձեռքին, որովհետև փող գտնելու ցան-
կութիւնը մեր մէջ պօրեղ էր և մէկ էլ՝ որ Սառան հօքրի
կամքն էր և մենք համոզւած էինք, թէ նա մեզ համար
երբէք չարիւ չէր կամենայ:

Կերանք... կերանք ու վագեցինք դէպի կալերը, դէ-
պի հայաթների քունչ ու պուճախը և սկսեցինք ամե-
նայն գգուշութեամբ փնտուել մեր կորուստը՝ փողերը...
Փնտուելիս անդադար կրկնում էինք հօքրի սոփորեցրամ
հետևեալ աղօթքը.

«Բաջըր, բաջըր, գիլի աջըր,
Կորուստս ասես՝ փայ կըտամ քեզ...»

Փսիսում էինք ամենայն հաւատով և գլխակոր այս-
ու այն կողմը ման գալիս: Մէկ էլ յանկարծ, ինչպէս
եղաւ, ճշտիկ Սեղօն ուրախութեան զիլ աղաղակով սկսեց
կանչել մեզ.

—Ջան, ջան, նանի ջան, գտել եմ, գրոշ եմ գտել:
Նա կոպեկանոցը պինդ բռնած ձեռքին և գոռում էր և
վեր ու վեր թռչում:

Մենք վազեցինք դէպի Սեղօն: Տեսանք նրա ձեռքի
փողը և սկսեցինք հարց ու փորձ անել, թէ նա որտեղից
և ինչպէս գտաւ:

—Հրէնիկ, մեր կալապանի կաղնու սնի տակը. սհէ
գնացի, նհէ գնացի, նհէ շուռ եկայ ու հէնց էնա, ասում
էի՝ «...կորուստս ասես, փայ կրտամ քեզ», մին էլ, «պու-
պուլ», տեսայ՝ սնի բամակին փողը վէր ընկած:

—Վա, ինչ սիրուն փող ա,—գարմանում էինք միւս-
ներս:

—Բա՛ որ ասում էի, թէ անպատճառ փող կը գտնէք,
—մէջ մտաւ Սառան հօրիրն առանձին լըջութեամբ,—դէ,
հմի հաւատացիր:

—Հա, հա, նանի ջան:
—Դէ որ հա, գնացէք, էլի լաւ ման եկէք, ամեն,
մէկդ էլ Սեղօի նման փող կը գտնէք ու կուրախանար:

Նորից գնացինք: Այս անգամ Ակօփը Սեղօին ա-
ռանձնացնելով, կուռը պցեց նրա ճտովն և մտերմաբար
խորհուրդ էր տալիս՝ թէ էդ փողով ինչ առնեն խանութ-
պանից. իսկ Սեղօն փողը պինդ բռնած՝ ձեռքը տարել
էր գրպանը և աչքերը չօած լսում էր նրան: Այս խոր-
հրդակցութիւնից յետոյ ցրեցին և աւելի եռանդով ու
աւելի զգուշութեամբ սկսեցին փնտռել և «քաջքի» ա-
ղօթքը շուտ-շուտ կրկնել: Եւ մենք, մեզանից ամեն մէ-
կը, մերթ փնտռում էր, մերթ գանազան որոշումներ էր
անում իր մտքումը թէ՛ Սեղօի և մեր գտնելիք փողերով
ինչ պէտք է առնենք չարչի Ռոստոմի գուրանից:

—Սեղօ, էհէյ Սեղօ,—երբեմն ձայն էինք տալիս մէկ-
մէկ նրան:

—էդ ինչ ա, Ակօփ,—հարցնում էր Սեղօն:
—Դու գուր տեղն էլ մի ման գայ, հերիք քեզ, ինչ
որ գտար:

—Խի որ:
—Նանն ամեն հետ գալթայ չի թիլի՛ բա իմացիլ չես:
—Համա ասում էք, հա, հայ թէ կուզէք, որ ես հե-
ռանամ ու մնացածները դուք գտնէք, հա...

Փնտռում էինք. երբեմն էլ միմեանց հետ հանար
անում և դարձեալ հետաքրքրութեամբ քունչ ու պու-
ճախ ընկնում:

Օրը քինթ ու մուլթը վեր էր թողել՝ ապշել էր...
Մթնում էր... Նորածին լուսնի կեռը՝ բուրից հանած
մանգաղի հրաշէկ կաուցի նման պսպղին էր տալիս: Չէն-
ձունը գաղարել՝ անսաս էր արել:

Եւ մինչդեռ ամենքը բանթող արած՝ տուն էին եկել
հանգստանալու, մենք դեռ կայերի մօտերն աչքներս
սեխ-մեխ տալով, կորստի էինք ման գալիս: Էնքան
դէս ու դէն էինք ընկել, որ յոգնել էինք: Մի՛նչ այս, մի՛նչ
այն, մէկ էլ լսեցինք, որ մեր սրահից ձայն էին տալիս մեզ.

—Էրեխէք, այ էրեխէք...
—Էհէյ, էդ ինչ ա,—հարցրինք մենք:
—Եկէք, հօրիրը կանչում ա:

Հօրքի անունը լսելուն պէս՝ դնացինք: Լճոյ դառնայ
մեր նանը. լաւ իմանալով, որ ամբողջ օրը դէս ու դէն
ընկնելուց սաստիկ քաղցած ու յոգնած կըլինէինք, մեզ
համար «մխլով» ձւածեղ էր արել: Մենք, սոված գայլի
նման վրա թափեցինք թաւին և քիչ էր մնում, թա-
ւի կոթն էլ համբուրէինք: Գերանք, սառը ջուրն էլ վե-
րնից «կըլտ-կըլտացրինք» ու մի քիչ էլ հանար շիտակ
զրոյց արինք, առաւելապէս, ի հարկէ՛ Սեղօի գտած քոռ
զրոշի մասին և յետոյ՝ կրակ ու ճրագի հետ անթեղ
եղանք հանգչելու:

(Սրտատպած «Հասկեր»-ից):



Ք Ե Օ Ի Վ Ա Խ Ա Ղ

I.



ատարեալ աշնան օր էր՝ անարև
ու ցուրտ:

Գիլթօփանց Մադենի կալումը
մի խումբ երեխաներ էին հաւաքել.
Սարիբէգանց Սարօն, Ռէհանի Նիկալը,
Օրդականց Կարօն, Թազազուլի Աթին,
Չախնանց Վեփին, պստիկ Սիսակը և
ուրիշները:

Հաւաքել էին և մտածում թէ՛ ի՛նչ խաղ խաղան,
որ համ զւարճալի լինի, համ էլ աշխոյժ, որպէսզի մի
քիչ տաքանան էդ ցուրտ եղանակին: Երկար դէս ու դէն
ընկնելուց, շատ տակ ու գլուխ խօսելուց յետոյ Սարբէ-
գանց Սարօն մէջ ընկաւ.

—Տղէ՛ք, եկէք «Քեօխփա» (տանուտէր) խաղանք:

—Խազա՛նք, խազա՛նք, — համաձայնեցին գրեթէ բո-
լորը: Բայց Չախնանց Վեփին, որ երբեմն այդ խաղի ժա-
մանակ շատ ծեծ էր կերել, սկսեց չեմ ու չում անել, վա-
խենալով թէ՛ մի գուցէ այսօր էլ նոյն օրին ընկնի...

Սակայն քանի որ խաղը շատերի ցանկութեամբ ար-
դէն որոշւած էր, նրանք ուշադրութիւն չը դարձրին Վե-

անի դժկամութեանը և սկսեցին խաղով ընկնել, նրա
ընտրութեամբ զբաղել:

Սարօն իր առաջարկութեան համաձայն՝ փախախի
ծակից հանեց մի «կըրմըրչուրիկ» (կարմրագոյն) վէզ և
ձգեց տղերանց առաջը: Նրանցից ամեն մէկը՝ ձեռքն առ-
նելով վէզը, բութամատի և ցուցամատի մէջ մի քանի
անգամ պտրտեցրեց և գետին ձգելով ասաց.

—Տղէ՛ք, ի՛նչ դօշ (քաջ) կօծի է՛ (վէզ):

—Իգիթ է, իգիթ... (հերոս), — գովաբանեցին առան-
ձին-առանձին:

Խաղի համար վէզն էլ յարմար համարուեց: Այժմ
Քնում էր ընտրել մէկին, որ նա՛ խաղացողներից ամեն
մէկի անունով վէզ ձգի և ինչ որ վէզն իր նստածքով
ցոյց կըտայ՝ խաղացողն էլ այն դերը կունենայ:

—Ա՛յ, էրեխէք, — դարձեալ մէջ մտաւ Սարիբէգանց
Սարօն, եկէ՛ք Սիսակին անենք «կօծբաշխ» (վէզ ձգող). նրա
պէս հալալ տղայ չըկայ մեր մէջ:

—Համաձայն ենք, համաձայն, — միաբերան հաւանե-
ցին ամենքը: Եւ Սիսակը դարձաւ նրանց վէզ ձգողը:

Այնուհետև տղաները շրջանաձև կանգնեցին, Սիսա-
կին իրենց մէջն առնելով, սկսեցին սուր-սուր հայեացք-
ներով լրջութեամբ դիտել նրա վէզ ձգելուն, որպէսզի
ոչ մի խարդախութիւն չը կատարել ընտրութեան ժամա-
նակ: Սիսակը՝ վէզը ձեռք առնելով, մի քանի անգամ
մատների մէջ պտրտեցրեց և ձգեց Սարբէգանց Սարօի
անունով: Վէզն ալջու (վէզի գեղեցիկ կողմը) կանգնեց:
Երեխէքը մի առանձին զւարճութեամբ գոռացին.

—Ըհը՛, Սարօն քեօխփա, շընհաւոր, շընհաւոր:

—Տեսնենք՝ գղիրն (օգնական) ո՞վ կըլի... հետաքըր-
քըւեցին ամենքը: Մինչ այս, Սարօն իրեն քեօխփա երե-
ւակայելով, սկսեց աւելի հսկողութեամբ հետևել ընտրու-
թիւններին:

Սիսակը շարունակեց իր վիճակախաղը. վէզն այս

անդամ՝ Ռէհանի Նիկալի անունով նստեց թախան (ալշուի հակառակ երեսը):

—Տղէրք, բախտ եմ ասում է՛, բախտ,—գոչեցին բուրբը և Նիկալին էլ դարձաւ գզիր:

Եւ այսպէս յաջորդաբար վէզը նստեց թափ (վէգի մէջքը), Կարօն դարձաւ «ուանչպար» (երկրագործ). յետոյ նստեց ճիկ (մէջքի հակառակ փոսիկ երեսը), Աթին էլ եղաւ գոգ: Ամեն մի ընտրութիւն, մանաւանդ վերջին երկուսի ընտրութիւնները՝ առանձին ծափահարութեամբ և զարմագարով ընդունւեցաւ, որովհետեւ խաղի կուժն ու կուլէն նրանց գլխին պէտք է կտարէր:

Խաղի անգամները ահա պատրաստ են, դառնանք խաղին...

II.

Խաղը սկսեց, քեօխվա Սարօն խաղացողներին բաժանելով միւսներին՝ առանձին կանգնեցրեց, գզիր Նիկալի ձեռքը մի հաստ լախտ տալով պատուիրեց:

—Տղէ՛րք, «պրիսուստովը» (ատեանը) բաց է, ձեզանից ով ինչ գանգատ ունի, թող մօտ գայ ու ասի:

Տղէրքը միաբերան չկամութիւն յայտնեցին, պատճառաբանելով:

—Չէ՛, չէ՛, չենք ուզում: Մեր գեղի քեօխվա Լօշպատ ուղը, վճիռ անելիս, գնում կանգնում է Եարալոնց փէյնակիտուկի վրա ու էնտեղ է վճիռ տալիս, հմի թէ ուզում էք խաղը լազաթով ըլի՛ գնանք նշանակեալ տեղը:

—Հա՛, հա՛, գոչեցին ամենքը և գնացին: Բայց որովհետեւ Եարալոնց փէյնակիտուկը հեռու էր, գզրի առաջարկութեամբ Նասպանց գոմի աղբածակի շուրջը հաւաքեցին:

Տղերանց այդ առարկութիւնը նպատակ ունէր. խաղի ընթացքում շատերը պէտք է իրար հետ կուլէին, մէկ-մէկու վայր ձգէին ու քօլօլ տալին. գիտութեամբ փէյնտ

տեղ ընտրեցին, որպէսզի վայր ընկնելիս փափուկ տեղ վայր ընկնեն:

Հաւաքեցին: Սարօն նորից կրկնեց իր հրամանը: Ռանչպար Կարօն մօտեցաւ որպէս գանգատաւոր, փափախը վերցրեց, ձեռնափայտը գետնին գիմհար տալով սկսեց բարձր-բարձր խօսել:

—Քեօխվա ջան, գլխիդ ու արևիդ մատաղ, բա էսպէս ոյին կլի՞, որ էս տարւան-տարին իմ գլուխն եկաւ: Ամառը գաշտումը խրձերս գողացան, սարումը՝ ձիս, մի ամիս առաջ էլ բաղումս միրգ ու խաղող չըթողին՝ ողջ տարան. երէկ էլ եզս է գողացել էս պարօն թաղաղուլանց Աթին, բաս որան մի գատաստան չըկա՞յ...
—Շըհատ (վկայ) ունի՞ս, չըհատ...

—Հա՛, բեզ մատաղ, հրէգիկ, Կօճին է իմ չըհատը: Առանց հերթի սպասելու, առաջ է գալիս մեղադրւող գոզ Աթին և սուսիկ-փուսիկ, ամենայն քաղցրութեամբ սկսում է արդարանալ:

—Աղա քեօխվա, ա՛յ ժողովուրդ, Կարօի ասածը գըլխովին սուտ է: Ա՛յ տնածակներ, երէկ ես Տանձուտի մէրումը փէտ էի կարում, գչերա-կէսին եմ տուն եկել. բա ես Կարօի եզը ո՞նց կը գողանայի:

—Սուտ է, սուտ,—վրդովւած ընդհատում է եղնատէրը,—բա ինչո՞ւ չեմ Ձախանց Վեաօին ես թէ մի ուրիշի անումը տալիս: Բա ես խիղճ չունի՞մ, որ զուր տեղն ուրիշին մեղաւորեցնեմ:

Վիճաբանութիւնը տաքանում է, հեղձեալ նրանց մէջ աւելի իրարանցում է ընկնում: Նրանք հանաքուց բռնում են իրարից և ձիգ-ձիգ անում: Մինչ այս՝ ալից-ձախից միջամտում են և ասում:

—Քեօխվա ջան, էլ ի՞նչու էք բանն երկարացնում, վկային խօսեցրէք՝ նա ճիշտ կասի իր ասելիքը:

Քեօխվան ունկնդիրների ցանկութեան համաձայն՝ պատուիրում է մէջ բերել վէզ վկային և նրա ցուցումն

րով՝ այդ գործի արդարին ու մեղաւորին ճանաչել: Սի-
սակը ձգում է վեզը քեօխվի տւած հարցի համաձայն,
վեզը նստում է թափ:

—Տղերք, դուստ որ եզը ունչպար կարօինն է եղել,
—հաստատում է քեօխվան: Մէկ էլ են ձգում վեզը՝ մի-
երկրորդ հարցով, վեզն այս անգամ նստում է ճիկ:

—Ըհը՛, գողն է գողացել եզը,—գարձեալ հաստա-
տում է քեօխվան: Երրորդ անգամն է ձգում վեզը և
այս անգամն էլ այլու է կանգնում: Ծափահարում են ա-
մենքը, իսկ քեօխվան չարանում է գողի վրա:

—Վճիռը հաստատ է, վերջացաւ... Գղիր աղա, էս
գողը, էս դու, դէ՛հ, բանդ տես,—հրամայում է նա իր
օգնականին:

Գղիրը բարկութեամբ լի՝ առաջն է առնում գողին
և լախտատրաք անում նրան: Մին, երկու, տասներկու,
էնքան թափում է գղիրը, որ հանդիսատեսները միջա-
մտում են և թողութիւն խնդրում:

—Լաւ, լաւ, քեօխվա ջան, գողացածը ետ կը տայ,
բանհոգի մի անիլ տայ:

—Տղերք, էնգուր է սասած՝ թէ «գող՝ սիրտը դող».
սեսա՛ք թէ գող Աթին ո՛նց էր գողգողալի խօսում:

—Հա, քեօխվա ջան, հա,—երկիւղից փաղաքում էին
իրենց քեօխվին:

Ծիծաղն ու հըր-հըռոցը խառնւած հանար-չիտակի
հետ գող Աթին գլխին են կոտրում խաղի կուժն ու կու-
լէն: Վերջանում է խաղի այս շրջանը. տղաները սկսում
են նոր ընտրութիւն նախկինի ձևով և խաղը նորոգում
են, որպէզսի այս անգամ էլ ուրիշին թակեն: Եթէ երկ-
րորդ կամ երրորդ անգամւայ խաղերին՝ անսպասելի
կերպով գարձեալ գողը նոյն անձնաւորութիւնն է ընտր-
ւում, վա՛յ նրա ջանին. «Թրթու է, որ նա է ուտում»...



0859
1900

Ն Ա Ն Ա

Քուն զնեմ քեզ, դու քնես,
Ծածկեմ քեզ, որ չըմբես,
Նանն, բալիկ ջան, նանն...

Անուշ քնով կշտանաս,
Անփուշ օրով մեծանաս,
Նանն, շալիկ ջան, նանն...

Քնիր բալա, հանգիստ կաց,
Ես քո կողքին եմ նստած,
Նանն, ջանիկ ջան, նանն...


Ամեն ցաւ ու շուիզ դէմ՝
Գլուխս կըտամ փոխարէն,
Նանն, մանիկ ջան, նանն...



Այդ բոլոր չարչարանքը կարծես բաւական չէր. Չալօի էջը ուրիշ թշնամիներ էլ ունէր: Ամբողջ գիւղի շաւրածծի մանուկները՝ հէնց որ էշին գտնուում էին պարապ մի հնարքով դռնիցը հեռացնում էին և՛ ջուխտ ու կենտ վրան թափելով, այնքան վազում ու վազեցնում էին անբան անասունին, որ քափ ու քրտինքի մէջ լողացնում էին նրան:

Մանուկների այդ անպիտան վարմունքը ցաւ ու կրակ էր դարձել Չալօի համար: Մեծերին, որպէս թէ «խաթրիչուն» բան չէր առում, իսկ փոքրերին, թէկուզ մտածում էր պատահած ժամանակը մի լաւ թակել, բայց այնպէս փախչում ու թագնւում էին անպիտանները, որ նրա առաջը մնում էր միայն էջը՝ իշացած կանգնած: Այսպիսի դէպքում Չալօն իր սրտի զայրոյթը էշիցնէր հանում, այնքան «վեր էր հատում», որ էշի ետին օտքերն ուղիղ գնալու փոխանակ՝ միշտ թեք-թեք էին գնում:

Հէնց որ մի կիրակի կամ մի աօն էր գալիս, մանուկների բախտը բանում էր: Նրանք գիտէին, որ «հուլմի» օրը՝ Չալօն գործի չի գնում, ուրեմն և էջը տանն է մնալու և վաղ թէ ուշ՝ գոմից կամ կալապանից արօտի են արձակելու: Չարածծիները խումբ-խումբ շտապում էին դէպի Չալօի տունը և հեռու մօտիկ այնքան «մլուր» էին



էջը յոգնում, գետնին պտուկում էր ժամերով:

անում, մինչև որ էջը դռներին կերևար: Նրանց մէջ չորս թէ հինգ հոգի շատ չարերն էին, հաստապուօջ Ապ-

րօն, մեծատուի Վասիլը, բզէզ Նեօն և ծակփափախ Մուկուչը, իրենց հանգ ու հնարքով միւսների խմբապետներն էին: Ով շուտով էշին իրան ճանկն էր գցում, նրա կոծին «այլու» էր, առաջինն ինքն էր հեծնում, գիւղից հեռացնելուց յետոյ՝ «Ղիրիթախազ» սարքում և ապա հերթով միւսներն էին «պոչահանաք» և «քարւան կտրէք» խաղում:

Մի անգամ «Չուխտ հուլմի» (աօն) էր, երկու օր շարունակ Չալօն տանն էր—չարաթն ու կիրակին անգործ էր անցկացրել: Նա մտադիր էր կիրակի երեկոյեան, ժամից յետոյ՝ էջով ճանապարհւելու դէպի իր մի հատիկ արտը, որ գտնուում էր գիւղի հանդից դուրս: Նա ուզում էր շուտ գնար, որ գիշերը արտի մօտ քնի, երկուշաբթի առաւօտ կանուխ գործի կպչի:

էջը դռներին չէր: Չալօն գեղամէջ իջաւ, դէս ու դէն նայեց, սրա ու նրա գոմ ու մարագը մտաւ, այս ու այն կալապանն ու շաքարանը տնդղեց, բայց էջը չը կար ու չը կար: Իսկոյն հասկացաւ, որ չարամիտ երեխաները նորից էշին տարել էին տանջելու: Չայրացած վերցրեց մի հօնի «եղան», գիւղիցը դուրս գնալով դէպի մօտակայ արտերը՝ սկսեց անդադար աղաղակել. «էհէ՛ յ, էշ տանող, էշ տանող»: Սակայն և ոչ ոք չէր պատասխանում:

Չալօն աւելի կատաղեց և բերանը փրփրով լիքն՝ այս անգամ սկսեց թուռը-թուռը հայհոյանքներ թափել անամօթների դիւխն: Երբ տեսաւ, որ դարձեալ պատասխանող չը կայ, այնուհետև սկսեց ինքն իր էշին անիծել. «Երանի բեզ պէս ապրանք ուրիշն էլ ունի՞, թէ մենակ ես եմ, գէն ուտի քեզ, ինչ հայվան (անասուն) ես, հա՛...»:

Այսպէս շարունակ ինքն իրան խօսալոյ՛ առաջ էր գնում և այս ու այն կողմ նայելով, մտածում էր. «Ձը լինի՞ թէ գրողի տարած տղաները էշիս բարերից վէր

գրած լինեն կամ մի ծածուկ տեղ թողած ու էս գիշեր, գէլերի բաժին դառնայ»:

Մինչ այս մինչ այն, Չալօն քանի յիշում էր էշի կուլ-կուլ զոռոցը, այնքան հոգին նւազում էր և աչքերը մթնում էին: Մի առ ժամանակ այս ու այն կողմը ընկնելուց յետոյ, յանկարծ նկատեց, որ գիմացի սարիցը իրանց Նասիբ ապին ցած է իջնում: Իսկոյն բարձրացաւ մի թմբի գլուխ, ձախ ձեռքն ականջին դրեց, աջ ձեռքով փափախը վերցրեց օդի մէջ ցած ու բարձր անելով սկսեց կանչել.

—էհէ՛յ, Նասիբ ա՛պի, ա՛պի, ապի՛ի՛ի...:

Նասիբ ապին Չալօի հօրեղբայրն էր: Թէպէս ծեր էր ու մազերն արևոր, բայց դեռ սուր լսողութիւն ունէր: Լսելով Չալօի խօսքերը, ընդհատեց քայլերը և ձայն տւեց.

—էհէ՛յ, ա՛ղա, էդ ի՞նչ ա՛, էդ ի՞նչ ա՛ ա՛ ա՛...:

Չալօն այնքան պինդ էր աղաղակում և այնքան յուզւած էր, որ Նասիբ ապին ձայնը անխելի մնաց նրան և շարունակեց.

—Ա՛ խլանաս դու, ա՛պի, Նասիբ ապի՛.

—Աղա, էդ ի՞նչ ա՛, ի՞նչ ա՛, իմանում չե՞ս:

—Մեր էշը տեսար ո՞չ, մեր էշը տեսար ո՞չ, է՛շը, է՛շը...:

—Տեսայ, համա՛ բերի ո՛չ, տեսայ, համա՛ բերի ո՛չ:

—Ի՞վօ՞րը (որտեղ) տեսար, գ՞վօ՞րը...:

—Քարաբակուտի վերի լանջի՛ն, վերի լանջի՛ն:

—Հ՛մի որ գնամ, ընդեզ կըլի՞, թէ ո՛չ, ընդեզ կըլի՞, թէ ո՛չ:

—Բաս հօ գէլը կերաւ ո՞չ, բաս հօ գէլը կերաւ ո՞չ:

Մինչ այս ու մինչ այն, արդէն երեխաները իրանց անելիքը առաջուց արել և վերջացրել էին: Երբ տեսել էին Նասիբ ապին, էշին թողել էին և «քարակիտուկների» տակը տապ արել: Այժմ էլ, երբ ականջներովն ընկաւ Չալօի և ապին «ձէնն ու ձունը», ամեն մէկը շտապել էր փախչել: Հաստապաօջ Ապրօն, որպէսզի Չալօին վախեցնի.

և հնարաւորութիւն տայ՝ ընկերներին անվտանգ գիւղը մտնելու, բարձրացել էր մի սաղարթախիտ կաղնի ծառ և այնտեղից կանչում էր.

—էհէ՛յ իշատէ՛ր, էշն արտը կերա՛ւ, էշն արտը կերա՛ւ, կերա՛ւ:

Չալօն երբ լսեց այս աղաղակը՝ սիրթնեց: Նա լաւ գիտէր, եթէ արտերի պահապանը էշին բռնի և «տուն անի» (բանտարկել), ահագին տուգանք են խլելու իրա-



Առաջին ինքն էր հեծնում

նից: Իսկոյն ձայնը կտրեց և սուս ու փուս, ծածկաբար ճանապարհով այնպէս քայլեց դէպի ապին ցոյց տաւ տեղը, որ չը լինի թէ մէկը տեսնի և «խաբար» տայ զօրոջուն (պահապան), թէ Չալօն էշին էր ման գալիս և նրա էշն էր, որ արտը կերել էր:

Այս խորամանկ հնարքով երեխաները գնացին գիւղը և Չալօն էլ տեղ հասաւ ու էշին գտաւ: Խեղճ անասունը կանգնած էր գլուխը խոնարհեցրած, ականջները ցած ձգած, պոչը ոտքերի «արանքը» սեղմած, իսկ մէջ-

քի մաղը շատ նստել ու վեր կենալուց «փետած» ու ցած էր թափած: Նա թէև ա՛խ քաշեց ու քթի ծակերից բարկութեան ծուխ ելաւ, սակայն պահապանի երկիւղից, առանց մի խօսք ասելու, էշին առաջն առաւ, տուն քշեց:

Տուն հասնելուն պէս՝ նարն տեղաւորեց, և որովհետև շատ ման գալուց և բարկանալուց յոգնել էր, այդ երեկոյ էլ չէր կարող հնձի գնալ: Մտաւ տուն, Եղսու՛մ հարսի պատրաստած սովորական ընթրիքը մաքրազարդեց և պառկեց քնելու, որ առաւօտեան վաղ ճանապարհէ: Ահա մեր չարածձինների արարմունքը այդ հետեանքն ունեցաւ Չալօի և նրա էշի գլխին:

II.

Ուսացաւ... կենդանացաւ գիւղը, ոտքի ելաւ և Չալօն: Եղսու՛մ հարսը վաղուց էր վերկացել ու պաշարի խուրճինը պատրաստել: Հացը, սխտորն ու քացախով լիք կճուճը խուրճինի մի մասն էր ածել, իսկ սրոցը, հնձի մատնոցը, «սահէնն» (աման) ու «փարչը» (փայտէ կուժ) միւսը: Էշին էլ մի լաւ թիմարելուց յետոյ, փայլանն ու չուլը կապել էր ու պատրաստել:

Հէնց որ Չալօն ոտքի կանգնեց, հագաւ իր հնձի «արաքեօհնակը», (սպիտակ շապիկ) երեսին մի երկու «չուփ» ջուր խփեց, գլխի փափախով երեսը աջ ու ձախ քամեց, սրբեց, մանգաղն էլ թևին ձգեց ու բեռնած էշին առաջն առնելով՝ և՛ խօսում էր և առաջ գնում:

—Տէր Աստուած, իմ երեսը Քո ոտի տակը, դու ըլես աղքատի օգնականը:

—Ա՛յ մարդ, ձայն տուց Եղսու՛մը, զգոյ՛շ կաց օձից, գէլից. թէզ կը հնձես ու չուստ ետ կը դաս, աչքս ճանփիզ է մնալու:

Չալօն գնաց: Գնում էր էշին թօշ-թօշ անելով ու մի հաց կուան տակը գրած, և՛ ուտում էր, և՛ մտածում:

«Վերի փէշից կսկսեմ հունձը, մինչև ճաշը կաղնիներին կը հասնեմ ու մի քիչ «պատառ-մատառ» կանեմ (նախաճաշ), յետոյ մինչև իրիկնագէմ մի երեք տասնեակ խուրճըն էլ որ կապեմ. հալալ կըլի իմ կերածը:»

Գնալիս՝ աղբիւրից փարչը ջրով լցրեց, ինքն ու իր էշն էլ մի կուշտ ջուր խմեցին և շարունակեցին ճանապարհը: Արևը մի «չւան» բարձրացել էր, որ նրանք տեղ հասան: Չալօն շատ ուրախացաւ, երբ հասուն արտը տեսաւ, նրա մտքով անցած հազար ու մի տեսակ չար ու վրասակար ենթադրութիւնները կորան, քէֆն եկաւ, որ հասկերը դեռ ոտքի վրա էին ու չէին «կծղել», փչացել: Թէև ճանապարհին նա շատ կծղած արտեր էր տեսել և կարծում էր թէ՛ իրանն էլ նոյն օրին կը լինի, բայց փառք Աստու՛մ, նա չէր դժբախտացել. արտը «սող-սալա-մաթ» հնձի էր սպասում: Նրան թւաց թէ՛ հասկերը իրար ըմսւելով, մի խոնարհ ողջոյն տւին իրան: Փափախը վերցրեց, ծունկ չօքեց, հասկերից մի փունջ բռնեց և համբուրեց: Յետոյ՝ աչքերը դէպի երկինք բարձրացնելով՝ ասաց.

—Տէ՛ր Աստուած, քաղցր է քու դատաստանը, մինչև օրս պահել-պահպանել ես ինձ, օրէս դէնն էլ սաղութիւն տուր՝ անվնաս հնձեմ, խրձեմ, դիզեմ, կրեմ, կալսեմ՝ ու «դեղնազարդ» ցորենիս տիրանամ, յետոյ ես գիտեմ իմ մարդկութիւնը:

Ապա վերկացաւ, էշիցը խուրճինն ու փայլանը իջեցրեց, արձակեց արօտի: Թաշկինակով գլուխը կապեց, հնձի մատնոցը ձախ ձեռքի մատներին հագաւ, աջով վերցրեց կեռ մանգաղը և երեսին խաչ հանելով՝ սկսեց հնձել: Որքան հնձում էր և ոսկեփայլ հասկերը բուռն էր անում, դաստայ հաւաքում, գետնին դարսում, այնքան աւելի քաջալերւում էր: Հնձե՛ց ու հնձե՛ց, արևի թէժ բոցն ու կրակը չէր աղբւում ոգևորւած մշակին: Քրտինքը ճակատից և ականջների քամակից կաթկթում էր,

Թիկունքն ու կուրծքը խօ՛ւ և՛ քրտնում թաց էր լինում, և տաք արևի տակ ցամբում՝ չորանում։ Բայց այս գրութեան մէջ նա դարձեալ հնձում էր։ Երբ սովեց, մանգաղն առաւ ու գնաց կաղնիների սուերների տակ նստեց, աջ ցուցամատով ճակատի քրտինքը ծոր-ծոր ցած թափեց, ապա՝ սահէնը հանեց, սխտորը մէջը ծեծեց, քացախով լցրեց, հացը բրթեց մէջը և մի կոշտ կերաւ։ Թրթուշ բրթոշը այնքան ախորժելի և զովացուցիչ էր Չալօի փորին, որ երկրորդ անգամ պատրաստեց ու կերաւ։ Յետոյ փարչը շրթունքներին դնելով՝ մի կոշտ էլ շուր խմեց, բթացած մանգաղը սրեց և դարձեալ օտքի կանգնեց ու սկսեց իր գործը։ Այս անգամ այսպէս էր մտածում։


—Մինչև մութը կը հնձեմ, դաստէք կանեմ, իրիկնապահին՝ «կէմներ» (կապիչ) կը պատրաստեմ ու խուրճը կը կապեմ։

Այդպէս էլ արեց. երեկոյեան, երբ նա համարեց՝ չորս տասնեակ խուրճն էր հնձել ու կապել։ Էշի քէֆն էլ լաւ էր. թէև արևի տակ, ճանճի յարձակումից հանդրատութիւն չունէր, բայց անուշ և թարմ խոտից այնքան էր կերել, որ փորն ուռել էր։

Երբ մութը մթնեց, Չալօն նորից հաց կերաւ։ Նրա դարդն այս անգամ էշն էր. ո՞նց անէր, որ էշին անփտանգ պահէր։ Նա լաւ գիտէր, որ այդ հանգումը շատ գայլեր կան, հէնց որ հօտն առնեն՝ կը գան և կարող է պատահել, որ էշին էլ ուտեն, իրան էլ։ Մտածեց, մտածեց և ճարը գտաւ. փախնը ծածկեց էշին, որ գիշերային ցրտից չը մըսի, չւանի մի ծայրը կապեց նրա օտից, միւս ծայրը իր օտից, որպէսզի էշը չը կարողանայ հեռանալ ու մի պատուհասի չը հանդիպի։ Յետոյ մի կահուղ քար գլխի տակ դրեց, չուլը վրան գցեց ու քնեց։ Յոգնած մա՛րդ և քա՛ղցր քուն, այնպէս խորը քնեց, որ զուռնայ փչէիք ականին՝ չէր իմանայ։

«Քնածն ու մեռածը մէկ է»։ Գիշերւայ մի ժամա-

նակ, որտեղից որ էր, մի սոված գայլ «պուպուզ», եկաւ ու նստեց էշի առաջ։ Էշը նկատելով իր անհաշտ բարեկամին, սկսեց զուար։ Մէկ, եկու զուայ, ոչինչ չեղաւ։



Մի սոված գայլ «պուպուզ», եկաւ ու նստեց էշի առաջ

Գայլն ուղեց իր սովորութեան համեմատ խաբար տալ. դէս թուաւ, դէնն ընկաւ, առաջը ծուլ-ծուլ եղաւ և մի քիչ տեղ վազեց, որ էշը հետևի իրան, բայց երբ տեսաւ,

որ նա տեղիցն անգամ չը շարժւեց, բարձրացաւ ու թռաւ էջի կոկորդից այնպէս պինդ բռնեց ու սեղմեց, որ երկու բոստից յետոյ՝ ահագին անասունը անշնչացած գետին ընկաւ:

Էջի մի՞ս ու սոված գա՛յլ, ուտում՝ ու թափահարում էր: Քանի նա էջի գէշը քաշքշում էր այս ու այն կողմը, այնքան չւանը ձիգ-ձիգ էր լինում: Չալօն իմացաւ, սակայն իրան չը կարողացաւ պարզել. նա կարծում էր թէ էջն ուզում էր տեղը փոխել ու հեռանալ և երբ ձգձգուող չւանը մի ծայրիցն էլ նրա ոտն էր քաշում, նա անդադար կրկնում էր.

—Թօ՛շ, թօ՛շ, գէլն ուտի քեզ...

Եւ գայլն արդէն ուտում էր: Կերաւ ամբողջ մարմինը, փորն ու փորոտիքը, մինչև անգամ չորս ոտն ու գլուխն էլ կաշւեղերծ արեց: Էջի ոտքերը կրծելիս, չւանը նորից շարժւեց և Չալօի ոտքը նորից թափահարւեց. այս անգամ դարձեալ խումփալէ մըմնջաց նա.

—Թօ՛շ, թօ՛շ, գէլն ուտի քեզ ինչ անասուն ես, հա՛:

Առանց Չալօի կամքի, արդէն գայլը էջին մաքրագարդել էր և նրա կմախքն էր մնացել միայն: Երբ ամեն բան վերջացրեց գայլը՝ դուռնչ ու մուռնչը լիզելով, գլուխն առաւ ու կորաւ:

Առաւօտեան ցուրտ քամին մրսեցրեց քնած Չալօին: Նա յանկարծ վեր թռաւ, ծոյլ-ծոյլ յօրանջեց, աչքերը տրորեց և այս ու այն կողմն նայեց՝ էջը չէր երևում. թէև չւանի մի ծայրը, իր ոտիցն էր կապած, բայց միւս ծայրը չը կար: Նա կարծեց թէ էջը կտրած կը լինի և հեռացած: Ոտքի կանգնեց և ի՞նչ տեսաւ. սիրուն էջի ոսկորներն են սիւսի մնացել չւանի ծայրից շարւած: Ա՛խ քաշեց Չալօն, ծնկներին ու գլխին վեր հատեց, բայց ի դուր... Յետոյ, կարծես ինքնաբերաբար նա արտասանեց.

—Ա՛յ տնաբանդի ապրանք, ասե՛նք՝ թէ՛ բգիցդ բռնել էր Ատածու անիծած գէլը ու շարչարում, բա մի չը

կարողացար զու՞լ, որ իմացել էի ու մի ճար արել քեզ...

Հինգերորդ օրը, երբ Չալօն հնձիցը վերադարձաւ տուն, Եղսում հարսը տեսաւ որ էջի փալանն ու խուրջինը իր մարդի մէջքին է բարձւած: Իսկոյն հասկացաւ նա իրենց թշւառութիւնը և գլխին ու ոտին «վեր հատեց»։ Այնուհետև՝ Չալօն էջի գործն էլ ինքը վիզն առաւ, և այդպէս էլ մեռաւ նա, ու նոր էջի էլ շարժանացաւ...

Բայց՝ քա՞նի այդպիսի թշւառներ կան մեր գիւղերում...



Գ Ի Ի Ղ Ի Հ Ե Ռ Ա Խ Ս Ս Ը

(Չարճալիք)

Աւագ ապին կանգնած է իրենց կայունն, իսկ Տիգրանը գիւղամիջուկն և միմեանց հետ խօսում են գեղական հեռախօսով: Տիգրանը մի ձեռքն ահանջին դրած, միւսով փափախը բռնած՝ ցած ու բարձր է անում և բարձրածայն կանչում է Աւագ ապին: Իսկ սա՛ աջ ձեռքով ձեռնափայտը գետնին յենած, ձախը տարել է ահանջի բամակը հաւաքել և լսում է.

—Ա՛պի, սպի, Աւագ ապի,	—Մերոնց իշին երէկ գիշեր,
Աւոււած սիրես, էջը կապի՛,	Երէկ գիշեր,
Մտուած սիրես, էջը կապի՛,	Գազանները փո՛րն են քշել,
է՛ջը կապի՛...	Փո՛րն են քշել...
—Ազն Տիգրան, Տիգրան, Տիգրան,	—Ա՛յ հանին ս, սյ տեղն ս,
էհէ՛յ Տիգրան,	Թ՛ամամ տեղն ս,
Իշին ի՞նչ կայ, ի՞նչ կայ նրան...	Գիճոր բիճու խտակ մեղն ս,
Ի՞նչ կայ նրան...	Հնալ մեղն ս...





ԳԻԼԿԱՊ

(Ժողովրդականից)

ի իրիկուն Բգուկ ապին հանդումն
 իշի հաժար խոտ անելիս՝ յոգ-
 նում է և նստում, որ համ չիբուխ քաշի, համ էլ հան-
 դստանայ: Յանկարծ նրա քունը տանում է: Մէկ էլ որ
 զարթնում է, տեսնում է որ էշը չը կայ: Հայ դէս էշ,
 հայ դէն էշ, էլ չի կարողանում իշին գտնել, որովհետև հա-
 կառակի պէս
 մուխը գալիս,
 պատում է ողջ
 աշխարհը: Ա-
 պին ճարը կըտ-
 րած, գերան-
 դին պահում է
 հանդումն և
 հազիւ ջրամա-
 նը վերցնելով,
 շտապում է դէ-
 պի տունն Ջահ-
 նանց պառա-
 շին իր իշի հա-
 ժար «գիլկապի»
 աղօթքն ասել
 տալու, որ գի-
 շերն՝ էն «մահը տարած իշին» հանդումը գէլ չը պատահի:
 Ապին հասնում է Ջահնանց գրուը, պառաւին պատա-
 հում է կալումն և ասում.



Չտապում է դէպի տուն

— Բարի իրիկուն, մեր հարս:
 — Բարին քո ողողց արևին, գլխով է անում պառաւը:
 — Բա չիս ասիլ, էշս կորցրել եմ, հէնց արքայու-
 թիւն ըլի քեզ, մի վախտին գիլկապ արա՛, խնդրում է ապին:
 Ջահնանց պառաւն ամենայն հաւատով իսկոյն վեր-
 ցնում է մի տրեխ, նրա տրխատէնով աղօթում է ու տրը-
 խատէնը կապ-կապ անելով ասում.
 — Գէլ ասեմ, գիլկապ անեմ, — Գէլ ասեմ, գիլկապ անեմ,
 Ատամին տակուից հանեմ, Ոտները տրխատէնեմ,
 Ճար-ճանփէն քարկապ անեմ, Օխտը կապ կապ-կպորեմ,
 Աչքերը ողջ քօռ անեմ, Առաջը մեծ հոր փորեմ,
 Իբան սար ու ձոր անեմ: Գլխին տամ՝ գլուխը հորեմ:

— Գէլ ասեմ, գիլկապ անեմ,
 Չեր իշի առաջ կալնեմ,
 Առաւօտ՝ բարի լուսին,
 Գու գնաս՝ գտնես իշին.
 Ամէն և ամէն, ամէն...

Դեռ պառաւի աղօթքի կիսումը՝ Բգուկ ապին քունը
 նորից տանում է, նրան հազիւ արթնացնելով՝ առաջնոր-
 դում են տուն...
 Առաւօտը երբ հանգն է գնում, տեսնում է իշից միայն
 ոսկորներն են մնացել:

(Արատապաժ «Շահեր»-ից)



ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԽՊԷՐԸ

Դառը քրտինք թափելով՝
Մեր ցաւերին ճար անենք...

Արի դնանք, եզը ջան,
Համ վար անենք, համ էլ ցան,
Աշխատանքի օրերը
Հրէս եկան, մօտեցան...

Դու լաւ գիտես, եզը ջան,
Ո՛չ խոտ ունես, ո՛չ դարման,
Ո՛չ էլ մերոնք ուտելու
Չոր հաց ունին էգուցւան:

Գուլթանը դու կը քաշես,
Մաճկալդ էլ կըլեմ ես,
Էն գլխիցը էս գլուխ՝
Էս փէշակն է պահել մեզ,

Ամբարներս դառարկ են,
Ո՛չ գարի կալ, ո՛չ ցորեն,
Մերոնց բերնից կտրելով՝
Պահել եմ քիչ սերմորէնք:



Արի գնանք, վար անենք,
Համ վար անենք, համ ցանենք,

Արի գնանք, ախպէր ջան,
Համ վար անենք, համ էլ ցան,
Պարապ-սարապ մնալուց
Չեռն ու ոտս թուլացան:

Կ Ո Վ Ե Ր Ը

Կովերն եկան, նանի ջան,
Կուրծերը լի արածան,
Վեր կաց, կթի, քիչ մեզ տուր,
Մի սպասեցնի մեզ իգուր:
Եկան մտան մեր կալը,
Տես նրանց հալն ու ափալը,
«Բա՛-բե՛օ, բա՛-բե՛օ» աղմկով՝
Իրար գտան հորթ ու կով:
— Բի՛ծի-բի՛ծի, Սօնիկ ջան,
Կաթդ ուտեմ փրշ-փրշան,

Արի, նանը քեզ կթի,
Մնացած կաթդ հորթդ ուտի:
— Դու էլ արի, Չողեր ջան,
Քո կուրծն էլ է քրշ-քրշան,
Նանի, սրան էլ շուտ կթի,
Սրա հորթն էլ է անօթի:
Նանը կթեց բոլորին,
Յետոյ թողեց հորթերին,
Նրանք կերան-կշտացան՝
Մենք էլ մեր մասն ըստացանք:



ԿԱԶԱՂԱԿ

Այ չաչանակ
Կաչաղակ,
Սիրուն թռչնակ,
Սարսարակ,

Մէկ էլ յանկարծ
Չայրացած,
Աւելի խիստ
Անհանդիստ,

Ի՞նչ ես ընկել դռնէդուռ,
Բազ ու պարտէզ ու կտուր
Եւ մտրումդ էդ ի՞նչ կայ.


Երկար պոչդ շարժելով,
Ի՞նչ ես բացում կտուցդ
Եւ վրդովւած հոգուցդ

Քանի՛ ճըշաս,
Կըշ-կըշաս՝
— 2ըկա՛-չըկա՛,
2ըկա՛-չըկա՛...

Չայն ես տալի
Վշտալի՛
— 2ըկա՛ — չէ — չէ՛,
2ըկա՛ — չէ — չէ՛...



ԱՇՈՒՆ



Աշուն է...

Ամառն անցաւ, եկաւ աշուն՝
Խաղողի լաւ ժամանակ,
Թէև տեսքով շատ չէ նախշուն,
Բայց պտղաբեր եղանակ:

Շաշխուն է...

Մէկ էլ տեսար՝ արև կանի,
Խառնաշփոթ եղանակ,
Յանկարծ, մէկ էլ՝ անձրև կանի
Մի բանի օր շարունակ:

Ջան, ջան, ջան...

Ամբարները լիքը ցորեն,
արին առատ, գինին շատ.
Տես, բոլորն ճնց ուրախ են՝
Տարին կանցնի անարատ:



ՔԻՍՎԿԻ ԱԼՄԱՍԸ



աւառական բաղաբներից մէկուն՝
գանու՛ւմ էր Գիսակե՛նց տունը:
Այդ ամն հաւատարիմ պահապանն
էր քաջ Արմատը—Գիսակի բրդոտ
և գեղեցիկ շունը: Նա ո՛չ միայն
ճանաչու՛մ, այլև շատ էր սիրու՛մ իրենց ամն
դամներին, սկսած ծնողներից մինչև փոքրիկ Լուսիկը:
Նրանք բոլորն էլ լաւ գիտենալով իրենց շան հաւատար-
մութիւնը, փոխադարձաբար սիրում և փաղաքշում էին
նրան: Իսկ Գիսակն այնքան մտերմացել էր նրա հետ, որ
օր ու գիշեր, համարեա թէ անբաժան էր նրանից և այդ
պատճառով Արմատը համարու՛մ էր Գիսակի շունը, նրա
աշակերտը, մինչև անգամ՝ նրա խաղընկերը:

Մեր պպերի ասած խօսք է. «Որդին հօրն ու մօրը
կը նմանի, ապրանքը՝ տիրոջը»: Տե՛ղտ այդպէս էլ՝ Գիսակն
իր ծնողների և Արմատն էլ իր տիրոջ նման շատ բարե-
սիրտ էին: Մանաւանդ այդ երկու ընկերակիցները
շատ նման էին միմեանց՝ նաև իրենց բնաւորութեամբ.
Օրքան Գիսակը բարի և ազնիւ մանուկ էր, այնքան Ար-
մատը ճարպիկ և խելացի կենդանի: Որքան առաջինը՝
կրակոտ և ընդունակ, այնքան երկրորդը՝ ժիր և քիճա-

տունն Երբեմն նրանց հետ էր լինում Գիսակի քոյրը՝ երկու տարեկան թոթովախօս Լուսիկը, որն իր փերուզեայ աչքերով ու նախշուն գեմքով, իր գանգուր մազերով ու թմփլիկ կազմեածքով՝ շատ էր սազ գալիս նրանց հետ։

Այնպես ամենքին դուրեկան էր։ Այ մէկ անգամ տեսնում էր նրան, այնուհետև առանձին հետաքրքրութեամբ էր նայում նրա վրա։ Նրա գանգրահեր գեղեցիկ մարմինը և կանգուն ու քնքոյշ ականջները, նրա վառվռուն արմատ աչքերն և արագավազ ու միջակ ոտքերը, մանաւանդ նրա բրգոտ և անհանդիստ պոչը՝ այնքան սիրելի և փայլալիկ էին Գիսակին, որ նա ամեն խաղից յետոյ՝ երբ շունը նրան անչափ ուրախացնում էր, իսկոյն փաթաթւում էր շան վզովը, համբուրում և ասում։

— Կեցցէ՛ Այնասիկս, արի՛ գնանք կարկանդակ տամ։

— Հա՛ֆ-հա՛ֆ, հա՛ֆ-հա՛ֆ, պատասխանում էր շունը ուրախաձայն և աջ ու ձախ թռչկոտելով, հետևում նրան։

Գիսակն ի՛նչ անէր-չանէր, ուր գնար-չգնար՝ Այնասն հետևում էր իր խաղընկերին։ Սա առաւօտեան արթնանալուց և լացեւոյց յետոյ՝ նախաճաշիկն առանց շանը չէր ուտի։ Դուրս գնար բակը խաղալու կամ պարտեզ դրօններու, առանց ընկերի մի՛ քայլ չէր անի, մի խօսքով, քիչ էր մնում, որ Այնասը նրա հետ դպրոց էլ գնար։

— Այնասիկս, արի՛ գնանք, մատիտ առնենք։ Եւ երկու ընկերները՝ միմեանց հետ խաղալով ու վազվզելով գնում էին խանութ, մատիտն առնում և վերադառնում։


— Այնաս ջա՛ն, արի՛ նախաճաշիկ անենք։ Եւ շունը գնում էր. երկուսն էլ ուտում, կշտանում էին։

Երբ ամենայն խորթակով նրանք նախաճաշում էին միասին, Գիսակը պայուսակն առնում էր ու պատրաստում գպրոց գնալու։

— Տես, գպրոց եմ գնում, Լուսիկիս, լա՛ւ նայիր, պատւիրում էր Գիսակը շանը ու ինքը ճանապարհւում։

Այնասը՝ փոքրիկ տիրոջ պատուէրը մտքումը, մտե-

նում էր Լուսիկին ու սկնում նրա հետ խաղալ։ Այնքան ժամանակ զբաղեցնում և փաղաքում էր նրան, մինչև որ մայրիկը գործը վերջացնելով՝ օրօրոցը փափուկ-մափուկ պատրաստում էր և Լուսիկին պառկացնում քնացնելու։ Նույն իր անելիքը լաւ գիտէր։ Նա շատ անգամ էր տեսել, թէ ի՛նչպէս Լուսիկին քնացնելիս՝ Գիսակը նստում էր մօտը և մայրիկից սովորած նանիկն երգելով՝ օրօրում



«Ճիտ» էր անում Լուսիկին և մրափում

էր օրօրոցը։ Իսկ այժմ, Գիսակի բացակայութեան ժամանակ, կարծես թէ ինքն էր ուղում փոխարինել նրան։ Նա այնքան ժամանակ չէր հեռանում օրօրոցից, մինչև որ Լուսիկի աչիկներին քուն գալով, մուշ-մուշ քնում էր նա։ Մայրիկը տեսնում էր այս և գոյարանում նրան։

— Ա՛յ, շատ ապրես, Այնասիկ ջան, Գիսակը որ գայ՝ երկուսից էլ քաղցր կարկանդակ եմ տալու։

Այնուհետև Այնասը մայրիկի խօսքերից խրախուսւած՝

երբ Լուսիկին քնացնում էր՝ պառկում էր օրօրոցի տակը — ամեն անգամ ճիշտ միևնույն տեղը—գլուխը դնում էր իր թաթերին և պոչը ձգելով օրօրոցի ոտքի վրա՝ որպէս թէ «ճիտ» էր անում Լուսիկին և մրափում։ Այնպէս այս գրութեան մէջն անգամ զոչ էր։ Մի փոքր ձայն, մի թեթև շարժում՝ և նա իսկոյն ոտքի էր ելնում և հսկում իր սիրելի Լուսիկին։



Քարոցից վերադառնալուն պէս՝ հազիւ ճաշում էր Քիսակը և այնուհետև, իր սովորական ժամերին, մինչև ուշ գիշեր, նա դբաղւած էր Այնասով։ Քիչ էր մնացել, որ նա իր ընկերոջը զանազան խաղերից զատ՝ այլև խօսել սովորեցնէր։ Եւ ի՞նչ... զարմանալի ընդունակութեամբ Այնասը հասկանում էր Քիսակի ամեն մի պատւէրը, նրա իւրաքանչիւր խօսքը։ Պատէիր՝ նա ո՛չ թէ անբան ու անլեզու անասուն լինէր, այլ ասուն ու խօսուն մի մանուկ։ Ամեն անգամ, երբ Քիսակը դասերը սերտելուց յետոյ դուրս էր դալիս բակը խաղալու՝ նրա կողքին անպակաս էր իր սիրելի ախպէրացուն, որ առանց դժւարութեան միշտ մասնակցում էր նրա բոլոր խաղերին։

—Սիրելիս, գնանք գնդակ խաղանք, ասում էր Քիսակը։
 —Ո՛ւ ո՛ւ ա՛ֆ, հա՛ֆ-հա՛ֆ, այսինքն թէ՛ խաղանք-խաղանք, պատասխանում էր շունը և իսկոյն վազում էր դէպի բազի մի ծայրը, Քիսակի գլխացը կանգնում և նրա գնդակ ձգելուն սպասում։

—Մո, բռնի՛, գոչում էր Քիսակը գնդակը շարժելով։
 Եունը ծուր-ծուր էր լինում, ուրախաձայն կլանչում և ցատկում էր ու բերանով բռնում գնդակը, ապա տանում Քիսակի ոտների մօտ վայր գցում։ Իսկ երբ Քիսակի ձգած գնդակը պատահամբ կտուրը կամ փողօցն էր ընկ-

նում, իսկոյն Այնասը համոզում էր նրան յետևից և գլտնում, բերում էր ու կրկին յանձնում ընկերոջը։

Շատ անգամ՝ երբ գնդակախաղից ձանձրացած, Քիսակը ցանկանում էր պարտէզ մտնել ու հայրիկի նման մշակութիւն անել, դառնում էր շանը և ասում.

—Այնաս ջա՛ն, գնանք պարտէզ։
 —Հա՛ֆ-հա՛ֆ, ո՛ւ ո՛ւ ա՛ֆ-հա՛ֆ, լա՛ւ, լա՛ւ, շա՛տ լա՛ւ, պատասխանում էր շունը և վազելով, գնում էր բազը կամ քլունգը բերանն առնում ու քարշ տալով տանում դէպի պարտէզ։ Պամ թէ մարգերից քաղւած աւելորդ կանաչները՝ բերանով դուրս թափում։

Այս ամենը դեռ բաւական չէր։ Այնասը շատ անգամ իր ընկերոջ հետ կասես թէ երգում էլ էր։ Երբ Քիսակն ուրախ տրամադրութեան տակ էր լինում՝ վերցնում էր հայրիկի ձեռնափայտն և իրենց ուսուցչի նման «չափ» տալով երգում էր այդ օրը սովորած կամ մի ուրիշ ծանօթ երգ։ Եունը ոգևորւելով նրա մանկական քաղցր և զրաւիչ ձայնից՝ ծառս էր լինում յետին երկու ոտքերի վրա, ան թաթով յետևում էր Քիսակի կողքին, ձախով կարծես թէ չափ էր տալիս տիրոջ նման և ինքն էլ ձայնակցում էր Քիսակին։ Սա՛ տեսնելով իր շան այդ տեսակ ընդունակութիւնը, կռանում էր, փաթաթւում նրա վզովը, գրկում էր նրան և անդադար համբուրում՝ նրա փափուկ, մեծաքսապատ այտերը, դունչն ու աչքերը։

—Կեցցե՛ս, ախպէր ջան, կեցցե՛ս։ Իդը հազար անգամ ընդունակ և խելօք ես՝ մեր դպրոցի՛ ծոյլ աշակերտներից, որոնք մի բան սովորեցնելու համար՝ այնքան պատժում և առանց ճաշի են մնում։

Եունը՝ կարծես թէ հասկանալով այդ խօսքերը՝ անկշի աշխուժանում էր և նրա խելացի աչքերի մէջ նշմարւում էր սէր և ուրախութիւն։

Մինչ այս մինչ այն, օրը մթնում էր։ Երկու ախպէրացուները շտապում էին տուն՝ հայրիկի ու մայրիկի մօտ։

Այնտեղ էլ դարձեալ Արման էր Գիտակին զբաղեցնողը: Նա Գիտակի կողքին նստած՝ ամենայն հետաքրքրութեամբ լսում էր նրա կարդացածը և դիտում՝ զրքի մէջ նկար-



Ինքն էլ ձայնակցում էր Գիտակին

ւած զանազան պատկերներ: Շատ անգամ նոյնիսկ՝ կարծես Արման էր սուղում թերթել գիրքը, իսկ երբ Գիտակը յոգնում էր, յօրանջելով ասում էր նրան.

—Ձանի՛կս, քունս տանում է, իսկոյն Արման իր սփորական ծառայութիւնն էր անում նրան. կոչիկները, շորերը և զբոխարկը տանում էր իջտական տեղը պահում: Մի խօսքով,

Արմատը ո՛չ միայն Գիտակի հմուտ խաղընկերն էր և մտերիմ ախպերացուն, այլև հաւատարիմ պահապանը և ուշագիւր սպասաւորը:



մայրս յ լոգրմարտս զյցես զմարտս և զստանա րայտս
մարտս րայտս զմարտս և զստանա րայտս

Պատահում էր շատ անգամ, երբ մայրիկը սաստիկ զբաղւած լինելով՝ դժւարանում էր տան բոլոր գործերը մենակ կատարել: Թէև իրենց Արմատը Գիտակի փոխանակ միշտ զբաղեցնում էր փոքրիկ Լուսիկին և այդպիսով հնարաւորութիւն էր տալիս մայրիկին իր գործին կենայու, բայց և այնպէս մայրիկը դարձեալ ծանրաբեռնւած էր: Բացի կար ու կարկատանից, տան մաքրութեան և շէնք ու շնորհքի հոգսը քաշելուց՝ այլև ամեն օր իրենց ընտանիքի մեծ ու փոքրի համար միշտ կեր ու խում էր պատրաստում՝ թէ ճաշերին և թէ նոյնիսկ գիշերները:

Եւ ահա, այս վերջին գործում մանաւանդ, խելօք շունը շատ մեծ օգնութիւն էր հասցնում մայրիկին: Նա առաւօտեան կանուխ հայրիկի հետ «բազար» էր գնում. այնքան ժամանակ սպասում էր նրա մօտ, մինչև որ հայրիկն ամեն ինչ առնում էր, կողովի մէջ դարսում և ապա շանը տալով, ամենայն հանգստութեամբ պատուիրում էր.

—Արմատ ջան, տուն տար, մայրիկին տո՛ւր. տե՛ս, ճանապարհին չուշանաս:

Շունը վրա էր յատկում, ատամներով պինդ բռնում կողովի տանգերից և մի քանի դրվանքայ ծանրութիւն ունեցող պաշարով լի կողովը թեթևութեամբ բարձրացնելով, շափ էր ընկնում գէպի տուն՝ մայրիկին յանձնելու: Ըննապարհին թէկուզ հազար մարդ փորձէր նրանից մի բան խլելու, բայց չէ՛, էնպէս պո՛ւկ էր անում և վազէվազ տուն հասնում, որ տեսնողները մնում էին զարմացած՝ նրա ճարտիկութեան վրա:

—Ահցցե՛ս շո՛ւն, փարձու մշակիցը հազար անգամ ինամբով է տանում ծանրոցը:

—Մի տե՛ս, Միտակ, էն շանը, տե՛ս ի՞նչպէս է վազում, կասես թէ բերանին ոչ ծանրութիւն կայ, ո՛չ էլ կողով:

—Ղոչազ անասո՞ւն, երևի տէրը սովորեցրել է սրան, որ մսեղէն ու զանազան ուտելիղէններն առանց փորձանքի և այդպէս խնամքով վազեցնում է դէպի տուն:

Ահա այս ու այսպիսի զարմացական ու գովաբանական խօսքերով էին ցոյց տալիս մարդիկ իրենց համակրուած թիւնը դէպի Գիսակի շունը: Եւ նա արժանի էր... նա գիտէր,



Գնում քերում էր սրբիչը

որ մայրիկն իրեն է սպասում, որ Գիսակն առանց իրեն տեսնելու դպրոց չի գնայ— և ահա, շտապում էր տուն՝ ինչպէս մի գիտակ ու գործի գնացող մարդ և ինչպէս ընտանիքի մի հարազատ անդամ:

Տուն հասնելուն պէս, մայրիկն ու Գիսակը նրան դիմաւորում էին, կողովն ստանում և նրան մի օրէէ պատանով հիւրասիրում:

—Այ շատ ապրես դու, Ալմաս ջան, մէկ էլ ինձ նեղութիւն չը տւիր՝ փոզոց գնալու, ասում էր մայրիկը՝ շոյելով նրա գլուխը:

—Ալմասիկս, այսօր, մինչև իմ վերադարձը, տանից չը հեռանաս, մայրիկին կօգնես, Լուսիկին լողացնելու է: Եւ շունը՝ որպէս թէ մի բան հասկանալով՝ Գիսակի օտքերի տակ պորտիկ-պորտիկ էր գալիս ու վընգվընգում:

Ալմասը շատ խելացի կենդանի էր. մէկ անգամ սովորածն երբէք մտքիցը չէր հանում, չէր մոռանում: Նա սուր յիշողութիւն ունէր, աչքով տեսածը՝ բանական մարդու պէս, կարծես թէ իւրացնում էր: Նա համարեա թէ եօթ-ութ տարեկան էր արդէն՝ Գիսակենց տանը ծնւած, այնտեղ սնւած ու մեծացած, այնտեղ վարժւած ու սովորած: Եւ այդքան ժամանակամիջոցում տարեցտարի աւելի բացւել, վարժւել ու կրթւել էր: Նրան այդ կրթութիւնը տւել էր Գիսակի հանգուցեալ եղբայրը՝ Տիգրանը, երբ Գիսակը դեռ երեխայ էր: Ինքը—Տիգրանը անժամանակ վախճանելով, ծնողները նրա յիշատակի համար խնամքով պահել, մեծացրել էին Ալմասին. ինչպէս իրենց հարազատ զաւակի սիրած ու փայլալայտ խաղընկերին: Ահա այսպէս, երբ Գիսակը եօթ-ութ տարեկան էր՝ շունն էլ գրեթէ նրան հասակակից էր, նրա հետ մեծացած և կրթւած: Ու եթէ այսօր նա այդքան ընդունակութեան տէր էր՝ այդ խնամքով պահելուն, լաւ կրթւուն և մէկ էլ նրա խելացիութեանը պէտք է վերադրել:

Իր սիրած ընկերոջ խօսքի համաձայն՝ շունը մայրիկի և Լուսիկի մօտից չէր հեռանում: Նա մայրիկի համար մի սպասաւորի չափ օգտակար էր, Լուսիկի համար՝ մի ծծօր: Զարմանալի կերպով օգնում էր նա մայրիկին մանաւանդ այն ժամանակ, երբ նա լողացնում էր փոքրիկ Լուսիկին:

Հէնց որ մայրիկը լացքի տաշտակը գնում էր նրատարանի վրա՝ տաք ու հով ջուրը մէջն ածում, երբ Լուս-

սիկին մերկացնում էր և լողացնելուց յետոյ ջրից հանում նրա թմիլիկ մարմինը սրբելու, իսկոյն Ալմասը վազելով գնում-բերում էր սրբելը ու վիզն երկարացնելով հասցնում մայրիկին: Լուսիկը գիտէր, որ Ալմասիկն իրեն համար է բերել սրբելը, ձեռքը մեկնում էր և թոթովում:

—Մայիկ, մայիկ, Ալմա...Ալմա...

—Հա, հա, բալա ջան, տես, նա էլ է օգնում քեզ լողացնելիս, պատասխանում էր մայրիկը, երբ մեծանաս՝ նրան կը պատուես:

Եւ շունը՝ իր անելիքը կատարելուց յետոյ՝ այնուհետև հանգիտ սրտով կամ խաղում էր Լուսիկի հետ և նրան զբաղեցնում, կամ երբ նա լողանալուց յետոյ՝ անոնը քնում էր, շունը դարձեալ իր առաջևն ծառայութիւնն էր անում մայրիկին, օրօրում էր փոքրիկի օրօրոցը և հսկում նրան՝ քնած ժամանակ:



Չար աչքը միշտ նախանձոտ է լինում... Փողոցային տղաներից շատերը մի քանի անգամ փորձել էին գողանալ Ալմասին, բայց չէր յաջողել, որովհետև՝ որքան նա իրենց տան ամեն մի անգամի հետ՝ մեծահոգի, համբերող և ներողամիտ էր, այնքան՝ օտարի, անծանօթի և կամ կասկածելի անձնաւորութեան դէմ՝ դարհուրելի, անհամբեր և զայրացկոտ: Մանաւանդ գիշերները՝ նա առիւծ էր կտրում: Երբ ամենքը հանգիտ քնած էին լինում, միայն նա էր, որ արժևի հսկողութեամբ գիտում էր տան չորս կողմը: Մի ոտքը պարտէզումն էր, մէկը բակումն ու պատշգամբի վրա: Մի բոպէ դէպի փողոցն էր ուշադիր լինում, իսկոյն կտուրն էր ցատկում, ձեռաց դռների առաջն էր համնում և երբ կասկածելի ոչինչ չէր գտնում, գալիս էր պատշգամբ և իր սեփական տունիկում՝ պառկում էր ու մարդ մտնում: Նա՝ թէև հասակով այնքան էլ մեծ չների ցեղիցը չէր, բայց և այնպէս՝ պատիկ էր ու չատիկ:


Տարիներ շարունակ նա ամենայն հաւատարմութեամբ անգրեւ էր Գիսակենց տանը և ոչ մէկը նրանից ոչնչով դժգոհ չէր:

Միայն, ինչպէս ասացինք՝ չար սիրտը հանգիտ չէր. փողոցային տղաներն ուզում էին Ալմասին անպատճառ ոչնչացնել, որպէսզի կարողանան գիշերով ազատ մտնել Գիսակենց բազը՝ գողութիւն անելու: Թէև նրանց արած մի քանի փորձը անաշող էր անցել, բայց և այնպէս մի վերջին անգամ էլ փորձեցին:

Մի գիշեր, երբ թանձր խաւարը պատել էր աշխարհը, երբ մարդիկ ցերեկայ աշխատանքից յոգնած՝ հանգիտ քնած էին իրենց տանը, երկու գող, օգտւելով այն հանգամանքից, որ շունը պատժգամ էր բարձրացել, ցանկապատով ցատկում են բազը, սակայն հազիւ երկու քայլ արած, Ալմասը վրա է հասնում և առիւծի նման յարձակւում թէ մէկի և թէ միւսի վրա: Գողերը ստացած վէրքից զայրացած, վրէժխնդիր են լինում շանից. նրանցից մէկը դաշոյնով հարւածում է շան գլխին, զանգը փշրում և ուղեղը ցրւում: Ալմասը մնում է տեղն ու տեղը անշնչացած... Ինքը գոհւում է և գողերին չէ թողնում, որ իր տիրոջ ընտանիքին որևէ վնաս հասցնեն:

Լուսանալուն պէս, Ալմասի սպանելու լուրը տարածւում է ողջ թաղը: Գիսակենց ընտանիքի մեծն ու փոքրն անասելի վշախ մէջ են ընկնում, Գիսակը տեսնելով իր սիրելի ընկերակցին մահւան սոսկալի գրկում, գրեթէ ուշաթափւում է... Անհուն վշախց նա օրերով ու շաբաթով այլևս չի կարողանում հանգստանալ: Թէև Գիսակին մխիթարելու համար նրա ծնողները Ալմասին իրենց պարտէզի պատի տակը թաղեցին, որպէսզի նրա յիշատակը չը մոռացուի իրենց սրտից, բայց և այնպէս, որքան շուտ հանգստացան ուրիշները, այնքան Գիսակը համարեա թէ երբէք: Անընդհատ լացն ու կոծը նրան մաշում ու նիհարեցնում էին: Մոռնները տեսնելով իրենց սիրածուն զուակի տանջանքը՝ նրա համար մի ուրիշ շուն են գտնում, բայց Գիսակը նրանով ոչ միայն չի ուրախանում, այլև մինչև անգամ երեսին էլ չի նայում:

Իսկ յիշողութիւնները մնում են Գիսակի մտքում: Մեծանալուց յետոյ էլ երբեմն երբեմն Գիսակը գնում էր իր սիրելի ընկերակցի գերեզմանին այցելութեան և մտաբերում նրա հետ անցկացրած օրերը:



Մ Ա Յ Ի Կ Ի ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ



Որսը բացելուն պէս՝ իրարանցում էր ընկնում ծիծեռնակի փորրիկ ձագերի մէջ: Հազիւ մի քանի օր էր, որ նրանք ծնւել էին մեր պատշգամբի տանիքի տակ եղած հին բնում: Ամբողջ գիշերը, հարիկի ու մարիկի հըսկազուլեան տակ, հանգիստ քննուց յետոյ՝ երբ ծագում էր գո՛վ առաւօտը, նրանք էլ իսկոյն զարթնում էին և, բաց անելով իրենց լայն ու տափակ կտուցները, ծըլծըւում էին անդազար և ուտելիք ուզում...

Նրանց ծըլոցից քնահարամ էին լինում մերոնց Փիսիկը, Միսիկն ու Փսփսուրիկը և գողէգող գնում էին պատշգամբի ճաղակալի վրա նստում ու, բերանների ջուրը գնալով, գիտում էին վերև, տանիքի տակը հիւսւած բնին, նրա մէջ խըլ-պըլտող ծիծեռնակի սիրուն ձագերին:

—Ա՛խ, թէ՛ ճանկս կընկնէք, էնպէս չամփեմ զլիններիդ ու խժոնս՝ ձեզ, որ փետուրներդ անգամ չը մնան... մտածում էր Վարսենիկի Փիսիկը և վիզը թեքած դիտում նրանց:

—Օհ, ի՛նչ անուշ միս կունենան է... էրնէկ կըլի, որ ձեր մսի համը տեսնեմ, փսփսում էր ինքն իրեն Իս-

կուհու Միսիկն աչքերը չոած, ուղիղ ձագերին նայելով:

— Էնպէս բամփեմ զըլիններիդ, որ տեղներիցդ անգամ չը շարժւէք, մտածում էր Բարդիկի Փըսփըսուրիկն և դունչը ցից ձագերին էր նայում միալար:


Մինչ այսմինչ այն, ձագերն արգէն առաւօտայ նախաճաշիկն էին անում: Հարիկն ու մարիկը միմեանց յետևից ի՛նչ ասես որ էին բերում նրանց համար. հաստիկ ճանճ, մսալի մորեխ, չաղ-չաղ միջատ, մի խօսքով՝ շատ, շատ-շատ բաներ...

Հէնց որ ծնողները որսից վերադառնում էին կտուցներում որևէ բան բռնած, թառ էին լինում բնի վրա և կտուցները մօտեցնելով ձագերին՝ դեռ մէկի, յետոյ երկրորդի և ապա հերթով միւսների բերաններն էին դնում բերած որսը:

—Վիստ, վիստ, վիստ, այսինքն թէ՛ շինձ, ինձ, ինձ», աղմկում էին միւսները մէկ-մէկու յետևից:

—Ծիւ, ծիւ, ծիւ.—լաւ, լաւ, լաւ», պատասխանում էին ծնողներն և իսկոյն յետ գնում որսի:

Փիսիկի, Միսիկի և Փսփսուրիկի համբերութիւնը հատել էր: Թէ՛ և մերոնց մանուկները ամեն օր նրանց կարկանդակով էին կշտացնում և վզներն էլ գոյնզգոյն ժա-



Թառ էին լինում բնի վրա



պաւէններով էին զարդարուած, իսկ անոնք որոնք կատու-
ների համար ոչինչ էին:

—Մի տես, մի տես, ինչ անուշ ձայն ունեն է:

—Ձայներն որ այդքան անուշ է, ապա միսներն ինչ
կըլի, մտածում էին նրանք և ուզում էին փորձել վերև
մագլցել. և մէկն էլ չը համբերեց, «հօպ», թռաւ դէպի
ձագերը, բայց կիսաճանապարհից ցած ընկաւ:

Այս ամենը վաղուց դիտում էր մերոնց մանուկների
մայրը: Սա, խղճալով ծիծեռնակներին, մտածեց կատու-
ներին հեռացնել իրենց տանից, որ փորձանք չը պատահի:

—Մայրիկ ջան, հազիր ծիծեռնակներին դուրս անենք,
տես, պատշգամբն հնց են աղտոտել,—խնդրում էր Վար-
սենիկը,—ես իմ Փիսիկին չեմ հեռացնի:

—Չէ, հոգիս չէ, ծիծեռնակներն արգար և ազնիւ
թռչուններ են, նրանց բոյնը քանդողի տունը Աստուած
կը քանդի ու եթէ վիրաւորենք նրանց՝ միւս տարի էլ չեն
վերադառնայ մեզ մօտ:

—Ձանտ հարկաւոր է, թող իսկի էլ չը գան, ասում էր նա:

—Այո, այո մայրիկ ջան, մեր կատուներին պապոնց
տուն տանենք մինչև որ ձագերը կը մեծանան ու ազատ
կը թռչեն, միջամտում էր խելօք Իսկուհին:

—Չէնց այդպէս էլ կանենք: Դիտէք սիրելիք, պէտք է
աշխատել ծիծեռնակներին իրենց, ձագերով միշտ անփորձ
պահել, որովհետեւ ով նրանց սպանի՝ նրա ընտանիքը
կանբախտանայ և զաւակները համը ու լըբ-լըբան կը ծնեն:

—Ի՞նչու, մայրիկ ջան, ինչու կը լինեն լըբ-լըբան:

—Ծիծեռնակների մեղքիցը: Չէ որ նրանք էլ ծնողներ
են և սիրում են իրենց զաւակներին, պատասխանում էր նա:

Միւսը օրը կատուները պապոնց տանն էին, ուր և
մնայու էին մի առժամանակ, որպէսզի ծիծեռնակի ձա-
գերն ազատ ու անփորձ մեծանան...

Այդպէս էր մայրիկի կարգադրութիւնը:

Վ Ե Ր Ձ

ԵՆՆՕԲՈՒԹ.—«Մանկական Ալբոմ»-իս առաջին փնջի սպառելուց խրախու-
ւած, հրատարակում եմ նրա երկրորդ փոնջը, որի մէջ եղած պատմածքներից ու
ոտանաւորներից մի քանիսը թէև արտատպութիւններ են «Հասկեր»-ից, բայց բա-
րեփոխուած և պատկերաւորած: Հրատարակ հանելով այս հատաբաժնով նախորդի
նման գնում եմ պաշտօնակից ընկերներին և անաչառ քննադատների յուրջ ուշադրու-
թեան տակ, որոնց ճշմարիտ խօսքն ինձ համար շատ թանկագին կը լինի:

Թորին շնորհակալութիւն «Հասկեր»-ի խմբագրութեան, որ հնարաւորութիւն
տեղ ինձ օգտուելու իր կիշէններից: 804. ԱՂԱԲԱԲ

« Ազգային գրադարան »



NL0399126

ԻՄ ԱՆԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԻ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԻ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. «Մանկական արամ» փունջ առաջին (սակաաթիլ)	20 կ.
2. «Փահլան արադաղը»	6 կ.
3. «Այճարած Դազոն»	6 կ.
4. «Զարօի էջը» (սպառաւած)	3 կ.
5. «Գուլիանի մատաղը»	7 կ.
6. «Փրփրական ցեցեր» Ա մաս	0 է.
7. «Մանկական արամ» փունջ երկրորդ	20 կ.



ՊԱՏՐՅՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա Բ

Ի Ա Լ ՈՒ Կ Ե Ր Ի Ե Ի Չ Ս Վ Փ Ա Հ Ա Ն Ե Ր Ի

ՀԱՄԱՐ

- | | |
|--------------------------------|--|
| 1. Հունձ ու փունջ. | 6. Գաղափարի հերոսը. |
| 2. Պապիս ձին. | 7. Երեքը մի գրօշ, պիկո 2 գոյ. |
| 3. Ո՞վ էր մեզաւոր, կատ. 2 գոյ. | 8. Բեմի քարոզիչը (Բիֆու Տայ քան. կեանքից). |
| 4. Ուսումնադներ. | 9. Արցունքի աղբիւրը (սասն). |
| 5. Փափափչի Սթնի գպրոցը. | |

Մտաւուժ է Թիֆլիսի և գաւառների բոլոր բնակիչ
գրադաստանների մաս